Այս են նահանկք, նախնիք, ծնողք, սը-
նունդ և արհեստ սրբոյս։

Բայց կարծեմ ստերիւրեցա յոճոյն, և
զարտաւղի ելա ի կարգէն այսպիսեաւք բար-
գաւաճել զսուրբս։ Սորա գաւառն յերկինս է,
քաղաքն և տաճարն, որոյ ճարտարապետ Ցի-
սուս է. որոյ և աչք Ցեառն Աստուծոյ ի վե-
րա նորա ի սկզբանէ տարւոյն մինչև ցկատա-
ւումն տարւոյն. որ կենդանեացն է վայր՝ և
զմեղաւք մեռեալս ոչ ընդունի. անայլալակն և
անորակն, անխառնն և անխախուտն, և զիպղն
և որպէսն՝ անհետազաւտելի է որքան ի
կապ կանք ընդ կաւիս։ Ուր շտեմարանն է
փառաց և պսակի սրբոցն. որ և գաղափարն
անտես է ական և անլուր ունկան և անանկ
սրտի. ճշմարիտ գաւառ, որ ոչ փոխէ զբնա-
կիչս և յայլո՝ յայլ անցուցանէ զստացուածն.
այլ մշանջենաւոր է ունաւղին և յաւերժակ
ստացաւղին։ Ուր աղքատքն ճոխանան, և սը-
գաւորքն ուրախանան, հեզքն բարձրանան և
քաղցեալքն յագենան, ողորմածքն պըսակին
և սուրբքն սրտիւք զԱստուած տեսանեն.
խաղաղարարքն որդիանան և հալածեալքն և
նախատեալքն զանասելի բարիսն ժառանգեն։
Այն է ստուգապէս գաւառ. և ո՞վ է յիմար՝
եթէ ոչ որ զայն գիտէ և ասա ստանայ ինչս
և ստացուածս, արարածս և անդաստանս,